

«ՎԱՆԱԶՈՐԻ ԶՈՎՅ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ»

Պ Ո Ա Կ

«Հաստատում եմ»

ՎՊՄԻ ռեկտոր, ք.գ.դ.

_____ Գ.Կ. Խաչատրյան

“ ____ ” _____ 2009թ.

ՏԵՂԵԿԱԳԻՐՔ

ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱՅԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Քննարկվել և ընդունվել է ՎՊՄԻ գիտխորհրդում

(արձանագր. թիվ ____ “ ____ ” _____ 2009թ.)

Վանաձոր 2009 թ.

ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱՆ ՈՐՊԵՍ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Համաձայն ՀՀ կրթության մասին օրենքի՝ մագիստրատուրան բարձրագույն մասնագիտական կրթության երրորդ աստիճանն է: Մագիստրատուրայում իրավունք ունեն սովորելու բակալավրի և դիպլոմավորված մասնագետի որակավորում ունեցող անձինք: Դիպլոմավորված մասնագետի և բակալավրի ծրագրերից մագիստրոսական ծրագիրը տարբերվում է ավելի լայն մասնագիտացմամբ, ինքնուրույն աշխատանքի զգալի չափով և արտահայտված գիտահետազոտական մասով:

Կրթության զարգացման ժամանակակից միտումները հաճախ բուհերի շրջանավարտներից պահանջում են ընդլայնել իրենց մասնագիտական գործունեության ոլորտը, ինչը կարող է իրականացվել մագիստրոսական ծրագրերով կրթությունը շարունակելու միջոցով:

1. ՎՊՄԻ-ի մագիստրատուրայի կանոնակարգի հիմնական դրույթները:

1.1. Մագիստրոսական կրթական ծրագիրը բարձրագույն մասնագիտական կրթության երրորդ մակարդակի ծրագիր է՝ բաղկացած երկու մասերից՝ կրթական և գիտահետազոտական: Կրթական մասը ենթադրում է մասնագիտական կրթության խորացմանը ուղղված առարկաների, կրթության բնագավառի, այդ թվում նաև բարձրագույն դպրոցի հոգեբանության, կառավարման հիմունքների ուսուցում: Գիտահետազոտական աշխատանքի բնույթը և ուղղվածությունը սահմանվում է ուսանողի անհատական ուսումնական պլանով:

1.2. Մագիստրատուրայի հիմնական նպատակը բարձր որակավորում ունեցող մասնագետների պատրաստումն է՝ բարձրագույն ուսումնական հաստատություններում, միջնակարգ ուսումնական տարբեր հաստատություններում, գիտահետազոտական հիմնարկություններում աշխատելու համար:

1.3. Ուսուցումը ՎՊՄԻ-ի մագիստրատուրայում իրականացվում է առկա ուսուցման ձևով: Մագիստրատուրայում ուսման տևողությունը կազմում է 2 տարի:

1.4. ՎՊՄԻ-ի մագիստրատուրայի ընդունելությունն իրականացվում է համաձայն համապատասխան կարգի (տե՛ս համապատասխան փաստաթուղթը):

1.5. Մագիստրոսական ծրագրերը մշակվում են համապատասխան մագիստրոսական պետական չափորոշիչների հիման վրա: Մագիստրոսական ծրագրերի ուսումնական պլանները մշակվում են տվյալ մագիստրոսական ծրագրի համար պատասխանատու ամբիոնի կողմից, քննարկվում և ընդունվում են գիտխորհրդում և հաստատվում է ՎՊՄԻ-ի ուսումնական գծով պրոռեկտորների կողմից:

2. Մագիստրատուրայի շրջանավարտների վերջնական ատեստավորումը

2.1. Մագիստրատուրայի վերջին կիսամյակում նախատեսված է ավարտական աշխատանքի՝ մագիստրոսական ատենախոսության նախապատրաստում և պաշտպանություն, ինչպես նաև պետական քննություն՝ մագիստրոսական մասնագիտության առարկայից: Վերջնական ատեստավորմանը ներկայացվող պահանջները շարադրված են համապատասխան մասնագիտության մագիստրոսական կրթության չափորոշիչում:

2.2. Մասնագիտական կրթական ծրագրով նախատեսված անհատական պլանը կատարած անձանց, որոնք հաջողությամբ պաշտպանել են մագիստրոսական ատենախոսությունը և հանձնել պետական քննությունը, շնորհվում է մանկավարժության մագիստրոսի որակավորում՝ տվյալ մասնագիտության ուղղությամբ և հանձնվում է պետական նմուշի մագիստրոսի դիպլոմ:

2.3. Մագիստրատուրայի շրջանավարտին տրվում է նաև դիպլոմի հավելված-քաղվածք տեղեկագրից՝ մագիստրոսական ատենախոսության թեմայի նշումով: Շրջանավարտին տրվող բոլոր փաստաթղթերը ձևակերպվում են ըստ բարձրագույն կրթության փաստաթղթերի ձևակերպման գործող կանոնների:

3. Մագիստրատուրայի տեղը ՎՊՄԻ-ի կազմակերպչական կառուցվածքում և նրա աշխատանքի կազմակերպումը:

3.1. Մագիստրատուրան ՎՊՄԻ-ի բոլոր մագիստրոսական ծրագրերով ուսուցումը կազմակերպող ուսումնական ստորաբաժանումն է:

3.2. ՎՊՄԻ-ի մագիստրատուրայի ղեկավարությունը իրականացնում է ռեկտորի կողմից նշանակվող մագիստրոսական ուսուցման ղեկավարը՝ պրոռեկտորը:

3.3. Մագիստրատուրայի աշխատանքի հետ կապված բոլոր հարցերը քննարկվում և ընդունվում է գիտխորհրդի կողմից:

3.4. Յուրաքանչյուր մագիստրոսական ծրագիր ունի իր առաջատար ամբիոնը և գիտական ղեկավար՝ ՎՊՄԻ-ի առաջատար մասնագետներից:

3.4.1. Առաջատար ամբիոնը պատասխանատու է մագիստրոսական կրթական ծրագրի բովանդակության և որակի, ուսումնական պլանի մշակման և ուսումնական պլանով նախատեսված առարկաների աշխատանքային ծրագրերի մշակման համար:

3.4.2. Մագիստրոսական ծրագրի գիտական ղեկավարը.

- համակարգում է տարբեր ամբիոնների աշխատանքները՝ ուղղված ուսուցման բարձր որակի ապահովմանը,
- մասնակցում է դասախոսների ընտրությանը,

- պատրաստում է առաջարկներ՝ մագիստրոսական ատենախոսությունների գիտական ղեկավարների նշանակման համար,
- պատրաստում է առաջարկներ՝ ուսանողների մագիստրոսական ատենախոսության պաշտպանությունը թույլատրելու համար,
- անցկացնում է խորհրդատվություններ մագիստրատուրայի ուսանողների հետ՝ նրանց ուսուցման անհատական պլանների վերաբերյալ:

3.5. Մագիստրատուրայի ուսումնական գործընթացի ապահովման համար ներգրավվում է համապատասխան ամբիոնների պրոֆեսորա-դասախոսական կազմը, կամ հրավիրվում են բարձր որակավորում ունեցող կադրեր՝ այլ բուհերից, գիտահետազոտական ինստիտուտներից, կամ այլ կազմակերպություններից:

3.6. Մագիստրատուրայում դասավանդման ծանրաբեռնվածությունը կազմում է դասախոսի ընդհանուր ծանրաբեռնվածության մի մասը:

4. ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱՅԻ ՈՒՍԱՆՈՂԻ ԱՆՉԱՏԱԿԱՆ ՊԼԱՆ

----- կիսամյակի համար

ԱԱՅ (լրիվ)

Մասնագիտությունը _____

Ընդունելության տարին _____

Մասնագիտության ծածկագիրը _____

Կիսամյակի սկիզբը “ ____ “ ____ 20 թ.

Կիսամյակի ավարտը “ ____ ” ____ 20 թ.

Ուսուցման ձևը՝ առկա

4.1. Ուսումնական աշխատանք

Առարկա	Կիսամյակ/կրեդիտ				Գնահատական				Դասախոսի ԱԱԳ	Ստորագրություն
	I	II	III	IV	1-ին միջանկյալ (20-բալանոց համակարգ)	2-րդ միջանկյալ (20-բալանոց համակարգ)	քննություն (5-բալանոց համակարգ)	վերջնական, (5-բալանոց համակարգ)		

4.2. Գիտահետազոտական աշխատանք 1-4-րդ կիսամյակների համար:

Առարկա	Գիտահետազոտական աշխատանքի տեսակը, կրճատ բովանդակությունը կիսամյակներում				Աշխատանքի ծավալը, ժամ	Կրեդիտ	Կատարման ժամկետը	Նշումներ կատարման մասին (ստուգված/չստուգված)	Գիտ. ղեկավարի ստորագրությունը
	I	II	III	IV					

Մագիստրանտ՝ _____ «___» _____ 20 թ.
ստորագր.

Գիտական ղեկավար՝ _____ «___» _____ 20 թ.
ստորագր.

4.3. Գիտահետազոտական պրակտիկա (4-րդ կիսամյակ).

Առարկա	Աշխատանքի տեսակը, բովանդակությունը	կրճատ	Աշխատանքի ծավալը (ժամ)	Կրեդիտ	Կատարման ժամկետը	Նշումներ կատարման մասին	Պրակտիկայի ղեկավարի ստորագրությունը

Մագիստրանտ՝ _____ «___» _____ 20 թ.
ստորագր.

Գիտական ղեկավար՝ _____ «___» _____ 20 թ.
ստորագր.

4.4. Մանկավարժական պրակտիկա (3-րդ կիսամյակ)

Առարկա	Աշխատանքի տեսակը, բովանդակությունը	կրճատ	Աշխատանքի ծավալը (ժամ)	Կրեդիտ	Կատարման ժամկետը	Գնահատականը՝ 5- բալանոց համակ.	Պրակտիկայի ղեկավարի ստորագրությունը

Մագիստրանտ՝ _____ «___» _____ 20 թ.
ստորագր.

Մանկավարժական պրակտիկայի ղեկավար՝ _____ «___» _____ 20 թ.
ստորագր.

Պարզաբանումներ մագիստրատուրայի ուսանողների անհատական ուսումնական
պլանի կազմման վերաբերյալ

1. Համաձայն ՎՊՄԻ-ի մագիստրոսական ատենախոսության կարգի՝ մագիստրատուրայում ուսուցումն իրականացվում է ըստ մագիստրատուրայի ուսանողի անհատական ուսումնական պլանի: Մագիստրանտի անհատական ուսումնական պլանը հաստատվում է ֆակուլտետի դեկանի կողմից:

2. Յուրաքանչյուր կիսամյակի անհատական ուսումնական պլանը կազմելու համար անհրաժեշտ տեղեկատվությունը (գիտահետազոտական աշխատանքների ցանկը, ժամաքանակը, կատարվող աշխատանքների անհրաժեշտ ծավալը, գիտական պրակտիկայի ժամաքանակը և դրա բովանդակությանը ներկայացվող պահանջները, ինչպես նաև ընտրովի առարկաների ցանկը) ներկայացվում է մագիստրոսական ծրագրերի գիտական ղեկավարների կողմից՝ տվյալ կիսամյակին նախորդող կիսամյակի ավարտից երկու շաբաթ առաջ, իսկ առաջին կիսամյակի համար՝ կիսամյակի առաջին երկու շաբաթների ընթացքում:

3. Մագիստրանտը պարտավոր է կազմել, համաձայնեցնել և հանձնել իր անհատական ուսումնական պլանը յուրաքանչյուր կիսամյակի առաջին շաբաթվա ընթացքում:

4. Հաստատված անհատական ուսումնական պլանի բնօրինակը պահվում է մագիստրատուրայի բաժնում, իսկ կրկնօրինակը ներկայացվում է ուսանողին:

5. 4.1-4.4 բաժինների բովանդակությունը պետք է համապատասխանի ուսումնական պլանով նախատեսված համապատասխան բաժինների բովանդակությանը:

6. «4.1. Ուսումնական աշխատանք» բաժնում նշված համապատասխան առարկայից ուսանողի ստացած գնահատականը հավաստվում է դասախոսի ստորագրությամբ:

«4.2. Գիտահետազոտական աշխատանք» բաժնի բովանդակության կատարումը հավաստվում է «ստուգված»/«չստուգված» գրառումով և գիտական ղեկավարի ստորագրությամբ:

«4.3. Գիտահետազոտական պրակտիկա» բաժնի բովանդակության կատարումը հավաստվում է «ստուգված»/«չստուգված» գրառումով և գիտահետազոտական պրակտիկայի ղեկավարի ստորագրությամբ:

«4.4. Մանկավարժական պրակտիկա» բաժնի բովանդակության կատարումը հավաստվում է գնահատականով՝ 5-բալանոց համակարգով և մանկավարժական պրակտիկայի ղեկավարի ստորագրությամբ:

5. Մագիստրանտի կատարած ուսումնական պլանի հաշվետվություն

Կիսամյակ _____

ԱԱՀ _____

Մասնագիտություն _____

Մագիստրատուրա ընդունվելու տարին՝ 20 __թ.

Ծրագիր, մասնագիտացում _____
(ծածկագիրը և անվանումը)

Կիսամյակի սկիզբը «__» _____ 20__թ.

Կիսամյակի ավարտը «__» _____ 20__թ.

I. Ուսումնական հատված (___ կիսամյակի համար)

Առարկա	Ժամ				Առարկայի կրեդիտ	Նշում կատարման մասին (ստ./չստ., կամ գնահատական)			Դասախոս (ԱԱՀ)	Ստորագրություն
	դաս.	գործն. (սեմին.)	լաբոր.	ինքն.		1 միջ.	2 միջ.	Վերջն.		

II. Գիտահետազոտական հատված (___ կիսամյակի համար)

Առարկա	Փաստացի կատարած գիտահետազոտ. աշխ., նրա կրճատ բովանդակ.	Աշխատանքի փաստացի ծավալը		Նշում կատարման մասին (ստ./չստ., կամ գնահատական)	Գիտական ղեկավար (ԱԱՀ)	Ստորագրություն
		Ժամ	կրեդիտ			

III. Մանկավարժական պրակտիկա (3-րդ կիսամյակի համար)

Առարկա	Պրակտիկայի փաստացի կատարած առաջադր., նրա կրճատ բովանակ.	Աշխատանքի փաստացի ծավալը		Նշում կատարման մասին (ստ./չստ., կամ գնահատական)	Մանկ. պրակտիկայի ղեկավար (ԱԱՀ)	Ստորագրություն
		Ժամ	կրեդիտ			

IV. Գիտահետազոտական պրակտիկա

Առարկա	Գիտահետազ.պրակտիկայի փաստացի կատարած առաջադր., նրա կրճատ բովանակ.	Աշխատանքի փաստացի ծավալը		Նշում կատարման մասին (ստ./չստ., կամ գնահատական)	Գիտական ղեկավար (ԱԱՀ)	Ստորագրություն
		Ժամ	կրեդիտ			

Պարզաբանումներ մագիստրանտի անհատական ուսումնական պլանի կատարման հաշվետվությունը կազմելու վերաբերյալ

5.1. Յուրաքանչյուր կիսամյակի վերջին շաբաթվա ընթացքում ուսանողը պարտավոր է լրացնել, համաձայնեցնել և դեկանատ հանձնել անհատական ուսումնական պլանի կատարման հաշվետվությունը: Հաստատվելուց հետո բնօրինակը պահվում է դեկանատում, իսկ պատճենները՝ ուսանողի մոտ և մագիստրատուրայի բաժնում:

5.2. Հաշվետվության համար անհրաժեշտ տեղեկատվությունը ուսանողներին տրամադրում է դեկանատը՝ յուրաքանչյուր կիսամյակի սկզբին:

5.3. Անհատական ուսումնական պլանով նախատեսած աշխատանքների կատարումը, ինչպես նաև փաստացի ծավալը (ժամերով և կրեդիտներով) հաստատվում են համապատասխան դասախոսների կամ գիտահետազոտական աշխատանքի, պրակտիկաների ղեկավարների «ստուգված/չստուգված» գրառումով, կամ գնահատականով և նրանց ստորագրությամբ:

5.4. Անհատական պլանի կատարման վերաբերյալ եզրակացությունն ընդունվում է պրոռեկտորի կողմից անհատական ուսումնական պլանի հաշվետվությունը հաստատելուց հետո:

6. Մագիստրոսի պատրաստման ուսումնական պլան:

6.1. Մագիստրոսի պատրաստման ուսումնական պլանը բաղկացած է հետևյալ բաժիններից.

ա) Ուսումնական հատված

1. Ընդհանուր մասնագիտական առարկաներ
2. Ծրագրի պարտադիր դասընթացներ
3. Կրթական հաստատությունների կառավարում
4. Ընդհանուր մանկավարժական առարկաներ
5. Մանկավարժական պրակտիկա
6. Պետական քննություններ

բ) Գիտահետազոտական հատված

1. Կուրսային աշխատանք
2. Ռեֆերատ, զեկուցում
3. Գիտահետազոտական աշխատանք՝ մագիստրոսական ատենախոսության թեմայով
4. Գիտահետազոտական պրակտիկա
5. Մագիստրոսական թեզի ձևակերպում և պաշտպանություն:

Ուսումնական հատվածի յուրաքանչյուր բաժնում նախատեսված են ընտրովի առարկաներ, որոնց ընտրությունը կատարվում է մագիստրոսական ծրագրի ղեկավարի

կողմից՝ հաշվի առնելով ամբիոններում ընտրովի առարկաների դասավանդման համար անհրաժեշտ պրոֆեսորա-դասախոսական կադրերի առկայությունը:

6.2. Մագիստրոսական ուսումնական պլանները մշակվում են ամբիոնների, համապատասխան դեկանատների, ուսումնական բաժնի և մագիստրոսական ծրագրի ղեկավարի համագործակցությամբ և հաստատվում են գիտխորհրդի որոշմամբ: Մագիստրատուրայի ուսանողները կարող են ստանալ ուսումնական պլանի պատճենը դեկանատներից, կամ մագիստրոսական ծրագրերի համակարգողից:

6.3. Ուսումնական պլանի առարկաների անվանումները համապատասխանում են պետական կրթական չափորոշիչների, ՀՀ բարձրագույն կրթության մասնագիտությունների ցանկին և կոնկրետ ամբիոնի գիտա-ուսումնական ուղղվածությանը: Առարկաների բովանդակությունը համապատասխանում է մագիստրոսական ուսուցման մակարդակին, որին հատուկ ուշադրություն է դարձվում պլանները կազմելու ընթացքում, և որը վերահսկվում է պետական հավաստագրման ժամանակ:

6.4. Մագիստրոսական ծրագրերի ուսումնական պլանների ծանրաբեռնվածությունը կազմում է 120 ակադեմիական կրեդիտ (30 կրեդիտ՝ յուրաքանչյուր կիսամյակի համար): Մագիստրոսական ուսուցումը ենթադրում է ինքնուրույն աշխատանքի ավելի մեծ ծավալ՝ ի համեմատ բակալավրական ծրագրերի: Հաշվի առնելով այդ հանգամանքը՝ մագիստրոսական ուսումնական պլաններով նախատեսած առարկաների կրեդիտային միավորների հաշվարկման համար ՎՊՄԻ-ում ընդունվել են հետևյալ հարաբերակցությունները.

- *կիսամյակում շաբաթական 2 ժամ դասախոսությանը տրամադրվում է 4 ժամ ինքնուրույն աշխատանք և հատկացվում է 3 կրեդիտային միավոր,*
- *շաբաթական 2 ժամ գործնականին (սեմինարին) տրամադրվում է 2 ժամ ինքնուրույն աշխատանք և կիսամյակում 2 կրեդիտային միավոր,*
- *շաբաթական 2 ժամ լաբորատոր աշխատանքին տրամադրվում է 2 ժամ ինքնուրույն աշխատանք և կիսամյակում 2 կրեդիտային միավոր,*
- *Քննաշրջանում քննությանը պատրաստվելու համար առարկայի շաբաթական յուրաքանչյուր ժամ դասախոսության դիմաց հատկացվում է 0,5 կրեդիտային միավոր:*
- *Այն մասնագիտական առարկաներին, որոնց դասավանդումը հիմնականում իրականացվում է գործնական կամ լաբորատոր պարապմունքների ձևով և նախատեսվում է քննություն, քննաշրջանում քննությանը պատրաստվելու համար շաբաթական յուրաքանչյուր ժամի դիմաց հատկացվում է 0,25 կրեդիտային միավոր:*

- *Տեսական մասից ստուգարքով ավարտվող առարկայի ստուգարքին պատրաստվելու համար առարկայի շաբաթական յուրաքանչյուր ժամ դասախոսության դինաց տրվում է 0,25 կրեդիտային միավոր:*

7. Մանկավարժական պրակտիկա

7.1. Մագիստրոսական ծրագրով նախատեսած մանկավարժական պրակտիկան հիմնականում ուղղված է մագիստրատուրայի ուսանողների կողմից մանկավարժության բնագավառի հիմնարկությունների, կրթական հաստատությունների աշխատանքի կազմակերպման հիմունքների, կառավարման համակարգի ուսումնասիրմանը: Քանի որ մագիստրատուրայի ապագա շրջանավարտները կարող են աշխատել տարբեր կրթական հիմնարկություններում, այդ թվում նաև վարչական պաշտոններում, նրանց աշխատանքը կպահանջի նաև ուսումնական նյութերի, ուսուցման ծրագրերի մշակման և պլանավորման, այդ թվում նաև նորագույն տեխնոլոգիաների կիրառման, սեմինարների, դասընթացների անցկացման հմտություններ, կարողություններ և այլն:

Հաշվի առնելով այդ հանգամանքը՝ մագիստրատուրայի մանկավարժական պրակտիկան կարող է անցկացվել կրթական համակարգի տարբեր տիպի հիմնարկություններում և ընդգրկի վերոհիշյալ խնդիրներին վերաբերող հարցեր:

7.2. Մանկավարժական պրակտիկան բաղկացած է հետևյալ փուլերից.

1. Տեղեկատվական-մեթոդական սեմինար՝ պրակտիկայի ղեկավարի գլխավորությամբ,
2. Պրակտիկայի թեմաների ընտրություն և քննարկում,
3. Պրակտիկայի անցկացում՝ տվյալների, նյութերի հավաքում, մասնակցություն՝ պրակտիկայի ծրագրով նախատեսած դասալսումներին, սեմինարներին,
4. Հավաքած նյութերի ամփոփում, փորձնական դասերի, դասախոսությունների, սեմինարների անցկացում՝ մշակած նյութերի օգտագործմամբ,
5. Պրակտիկայի պաշտպանություն՝ պրակտիկայի ղեկավարի և հրավիրված դասախոսների ներկայությամբ:

7.3. Մագիստրատուրայի մանկավարժական պրակտիկայի պաշտպանությունը կատարվում է ՎՊՄԻ-ի մանկավարժական և գիտահետազոտական պրակտիկայի համար սահմանված կարգով, հաշվի առնելով վերոհիշյալ առանձնահատկությունները:

7.4. Մագիստրատուրայի մանկավարժական պրակտիկայի գնահատումը կատարվում է 5-բալանոց համակարգով: Գնահատման արդյունքները գրանցվում են տեղեկագրում՝ պրակտիկայի ղեկավարի ստորագրությամբ:

7.5. Մանկավարժական պրակտիկայի ղեկավարները ընտրվում են ՎՊՄԻ-ի մագիստրատուրայի դասախոսների թվից:

7.6. Պրակտիկայի ղեկավարները մասնակցում են պրակտիկայի ծրագրերի ձևավորմանը, ղեկավարում են տեղեկատվական սեմինարները, անցկացնում են խորհրդատվություններ և պրակտիկայի պաշտպանություն:

8. Գիտահետազոտական պրակտիկայի ծրագիրը

8.1. Գիտահետազոտական պրակտիկան հանդիսանում է մագիստրոսների պատրաստման գիտահետազոտական հատվածի մի մասը: Գիտահետազոտական պրակտիկայի ընթացքում մագիստրանտները պետք է ծանոթանան իրենց մասնագիտություններին համապատասխանող գիտահետազոտական հիմնարկությունների աշխատանքին:

Պրակտիկայի նպատակն է.

- հավաքել նյութեր՝ մագիստրոսական ատենախոսության թեմայով,
- կատարել հավաքած նյութերի վերլուծություն
- ներկայացնել կատարված հետազոտությունը գրավոր հաշվետվության և բանավոր ներկայացման ձևով:

8.2. Պրակտիկայի հանձնարարությունը ձևակերպվում է կոնկրետ մագիստրոսական ծրագրի գիտական ղեկավարի կողմից՝ հաշվի առնելով 1-3-րդ կիսամյակներում ուսումնական պլանով նախատեսած և դասավանդված առարկաները:

8.3. Պրակտիկայի ղեկավարները մագիստրատուրայի դասախոսներ են: Ղեկավարը պատասխանատու է ուսանողների հետ պրակտիկայի սկզբում անհրաժեշտ բացատրական ժողովի անցկացման, պրակտիկայի հանձնարարության ձևակերպման և ուսանողների հետ խորհրդատվություն անցկացնելու համար:

8.4. Նշված ժամկետներում պրակտիկայի ղեկավարները հավաքում և ստուգում են պրակտիկայի հաշվետվությունները և նշանակում են հաշվետվությունների պաշտպանության օրերը:

8.5. Պրակտիկայի արդյունքներով ուսանողը կազմում է գրավոր հաշվետվություն՝ հետևյալ պարտադիր բաժիններով.

- ներածություն՝ պրակտիկայի հիմնական խնդրի ձևակերպմամբ,
- տեղեկատվության հավաքման և վերլուծության նկարագրությունը,
- հետազոտության արդյունքների ամփոփումը, գիտական և գործնական նշանակության ձևակերպումը,
- օգտագործված գրական և տեղեկատվական աղբյուրների ցանկը,
- հավելվածներ:

Պրակտիկայի հաշվետվության պաշտպանությունը կատարվում է սահմանված ժամկետներում՝ պրակտիկայի ղեկավարի և հրավիրված դասախոսների ներկայությամբ, հարցազրույցի տեսքով:

Պրակտիկայի գնահատականը ձևավորվում է գրավոր հաշվետվության գնահատականից (70%) և պրակտիկայի պաշտպանության գնահատականից (30%): Պրակտիկայի գնահատականը գրանցվում է տեղեկագրում «ստուգված/չստուգված» գրառումով՝ պրակտիկայի ղեկավարի, կամ գիտական ղեկավարի կողմից և նրա ստորագրությամբ:

8.6. Այն մագիստրանտները, որոնք չեն կատարել պրակտիկայի պահանջները և ստացել են բացասական գնահատական, պարտավոր են կրկնել իրենց աշխատանքն ինքնուրույն՝ դեկանատի կողմից սահմանված ժամկետներում: Գիտահետազոտական պրակտիկայից բացասական գնահատական ունեցող ուսանողներին չի թույլատրվում աշխատել մագիստրոսական ատենախոսության վրա:

8.7. Պրակտիկայի առաջադրանքի ձևակերպման օրինակ

ՎԱՆԱԶՈՐԻ ՀՈՎՀ.ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ
ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱՅԻ ԲԱԺԻՆ

ԳԻՏԱՐԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

Ուսանող _____

ԱԱՀ

Մագիստրոսական ծրագիր _____

Ծրագրի անվանումը

Առաջադրանք _____

(առաջադրանքի կրճատ ձևակերպումը)

Պրակտիկայի ղեկավար _____

ԱԱՀ, գիտ. աստիճանը, կոչումը

8.8. Գիտահետազոտական պրակտիկայի հաշվետվության տիտղոսաթերթի ձևակերպման օրինակ

ՎԱՆԱԶՈՐԻ ԶՈՎՐ.ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ
ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱՅԻ ԲԱԺԻՆ

ԳԻՏԱՅԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՅԻ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Ուսանող _____

ԱԱՀ

Մագիստրոսական ծրագիր _____

Ծրագրի անվանումը

Պրակտիկայի ղեկավար _____

ԱԱՀ, գիտ. աստիճանը, կոչումը

Հաշվետվությունը հանձնել է «___» _____ 20 թ.

Պրակտիկայի հաշվետվության

պաշտպանության ժամկետը «___» _____ 20 թ.

Պրակտիկայի գնահատականը _____

ՎԱՆԱԶՈՐ- 20 թ.

9. ՎՊՄԻ-ի մագիստրանտների վերջնական ատեստավորման կարգը:

9.1. Մագիստրատուրայի շրջանավարտների վերջնական պետական ատեստավորման նպատակն է որոշել նրանց մասնագիտական պատրաստվածության մակարդակը և համապատասխանությունը պետական կրթական չափորոշիչների պահանջներին:

9.2. Վերջնական պետական որակավորմանը թույլատրվում է մասնակցել մագիստրատուրայի այն ուսանողներին, որոնք հաջողությամբ և լրիվ ծավալով յուրացրել են համապատասխան մասնագիտության հիմնական կրթական ծրագիրը:

9.3. Մագիստրատուրայի շրջանավարտների պետական ատեստավորումը կատարվում է համաձայն ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից հաստատված կարգի և ՎՊՄԻ-ում մշակված կանոնակարգի (տե՛ս համապատասխան փաստաթուղթը):

9.4. Ամփոփիչ պետական ատեստավորման անցկացման համար ռեկտորի հրամանով ստեղծվում է ատեստացիոն հանձնաժողով:

9.5. Մագիստրատուրայի շրջանավարտների ամփոփիչ պետական ատեստավորումը ընդգրկում է ավարտական աշխատանքի (մագիստրոսական ատենախոսության) պաշտպանությունը և պետական քննությունը: Մագիստրոսական ատենախոսությանը ներկայացվող պահանջները որոշվում են ըստ ՎՊՄԻ-ում մշակված և ռեկտորի կողմից հաստատված մագիստրոսի ատենախոսության ձևակերպման մեթոդական ցուցումներով:

Մասնագիտական առարկայից պետական քննությունը անցկացվում է ըստ ՀՀ ԿԳՆ սահմանած կանոնակարգի և դրա հիման վրա ՎՊՄԻ-ում մշակված կարգի:

Պետական քննության ծրագիրը ևս հաստատում է ֆակուլտետի խորհուրդը:

9.6. Ամփոփիչ պետական ատեստավորման արդյունքներով պետական ատեստացիոն հանձնաժողովը որոշում է ընդունում շրջանավարտին համապատասխան մասնագիտության մագիստրոսի աստիճան շնորհելու և պետական նմուշի դիպլոմ հանձնելու մասին:

9.7. Պաշտպանությունից հետո մագիստրոսական ատենախոսությունը պահվում է ՎՊՄԻ-ի արխիվում:

9.8. Մագիստրոսական ատենախոսության տիտղոսաթերթը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՎԱՆԱԶՈՐԻ ՀՈՎՋ.ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՐԺԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

Ուսանող՝ _____

Թեմա _____

Աշխտանքը թույլատրվում է
պաշտպանության
Գիտական ղեկավար

ԱԱՀ

Ստորագր.

Հեղինակ

Ստորագր

Մագիստրոսական ծրագրերի
ղեկավար

ԱԱՀ

Ստորագր.

ք. Վանաձոր
20 թ.